ՀԱՅԱՍՏԱՆ. ՂԱՐԱԲԱՂԸ ԹԱՆԿ Է ՀԱՅԻՑ

Հայաստան այցելել ցանկացողներն այսօր քիչ են: Հանրապետությունը գտնվում է պատերազմի եզրագծին, Երևանի հյուրանոցներում հաճախ ոչ ջուր կա, ոչ՝ լույս, իսկ Մոսկվայից Երևան գնալ-գալու ինքնաթիռի տոմսը շուրջ 5 հազար ռուբլի է նստում: Մեկնում են թերևս ըստ կարիքի. զինվորականները՝ ծառայության վայր, և գործուղվածները, այդ թվում նաև մենք՝ լրագրողներս:

Եվ, այնուամենայնիվ, Երևան թռչելը գործնականում անհնարին է: «Ողջո՛ւյն ձեզ Վարդանից»: «Նա դեռ կոշի՞կ է կարում»: «Այո, հագուստ նույնպես»: «Վնուկովո» օդանավակայանի տոմսարկղերից մեկում օգտվելով մոտավորապես այսպիսի պայմանաբառից, կարելի է Երևանի տոմս ձեռք բերել, ճիշտ է, առանց տեղի ու ամսաթվի և, հասկանալի է, չափավոր հաշառքով: Բայց իրականորեն թռչելու համար վայրէջքի գոտի դուրս գալուց հարկավոր է մուծել 2 հազար ռուբլի:

ՂԱՐԱԲԱՂՆ ԱՅՍՕՐ

Չնայած Ադրբեջանի կողմից շրջափակման պատճառով հանրապետության ապրած դժվարություններին, իր բյուջեի 30-ից մինչև 40 տոկոսը այն օգնություն է տալիս Ղարաբաղի մարտնչող բնակչությանը: Այնտեղ է գնում մարդասիրական օգնության, մթերքի ու վառելիքի առյուծի բաժինը: Այդ մասին ընդունված չէր խոսել այնքան ժամանակ, մինչև Հայաստանը, համենայնդեպս, բացահայտորեն չմիջամտեց Ադրբեջանի և նրա ինքնավար մարզի՝ Ղարաբաղի միջև ծագած կոնֆլիկտին:

Օրերս ադրբեջանցիները, ձեռնարկելով լայնամասշտաբ հարձակում, հայերից խլեցին մի քանի բնակավայրեր, որոնք նրանք պահում էին վերջին ամսվա ընթացքում: Այնպես որ, հաղթանակի բերկրանքը երկար չտևեց: Ըստ երևույթին, հասել է պահը, երբ Հայաստանը պետք է վերջնականապես կողմնորոշվի. կամ հրաժարվել Ղարաբաղի անկախության գաղափարից, ավելի ստույգ՝ այդպիսի գաղափարը պաշտպանելուց, կամ պաշտոնապես պատերազմի մեջ մտնել նրա համար:

Առաջին տարբերակը գործնականում անիրական է: Ինչպես ինձ մտերմաբար ասաց մի բաջատեղյակ մարդ, «եթե հայերին ընտրություն առաջադրվի՝ հա՞ց, թե՞ Ղարաբաղը, բնակչության մեծամասնությունը կնախընտրի երկրորդը»:

Դրա հետ միասին մարդկանց հետ զրուցելիս լսվում էր և այսպիսի խոսակցություն. «Եթե մենք այն ժամանակ իմանայի՞նք, թե ինչ կբերի պատերազմը Ղարաբաղի համար...»:

Հետաքրքիր է, իսկ ներկայիս նախագահը և նրա մերձավոր զինակիցները, եթե նրանք այն ժամանակ իմանային, թե ինչպիսի ծանր քարի պես Արցախ-Ղարաբաղը կկախվեր ինքնուրույնության սլացող Հայաստանի վզից, կգնայի՞ն այդ նույն ճանապարհով, թե՝ ոչ:

Անշուշտ, նման հարց տալը այնքան էլ բարեկիրթ չէ այժմյան բարդ իրավիճակում, երբ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը զբաղված է Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման որոնումներով:

Այժմ այդ հիմնախնդրի խաղաղ լուծման հույսերը չափազանց շնչին են: Իսկ ինչպե՞ս է Ղարաբաղն ապրում այսօր: Այնտեղ առայժմ չեն մտածում շուկայական տնտեսության մեջ մտնելու մասին, այնտեղ դեռ հին, «նախավերակառուցողական» ժամանակաշրջանի աշխատավարձերն են, ինչպես, ասենք, նաև գները: Միսը շուկայում 15 ռուբլի է, օղին՝ 10, կոնյակը՝ 15, գինին՝ 3: Մարդիկ Ղարաբաղում այնքան էլ չեն հավատում, որ կարագը կարող է արժենալ 200 ռուբլի, իսկ Մոսկվայի տոմսը՝ 2 հազարից ավելի: Ճիշտ է, Հայաստանից վերջերս «կյանքի ճանապարհի» բացմամբ գները մի քիչ փոխվեցին. միսը, օրինակ, կրկնակի թանկացավ: Սակայն վտանգ կա, որ Հայաստանի նորահայտ բիզնեսմենները կսկսեն մթերք գնել Ղարաբաղում, կազմակերպելով հանդիպական «կյանքի ճանապարհ»:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՆՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԴԻՐՈՒԹԱՆՔԸ

Ի՞նչ են մտածում Մոսկվայում: Ո՞վ կողմն են ռուսները: Ահա այն հարցերը, որոնք անպայման կտրվեն Ռուսաստանից եկածին: Այդ հարցերում ավելի շատ հույս կա, քան պարզապես հետաքրքրասիրություն: Հայերը տարակուսանք են հայտնում ղարաբաղյան հիմնախնդրի նկատմամբ Ռուսաստանի ղեկավարության հստակ դիրքորոշման բացակայության առթիվ: Նրանք վրդովվում են, տեղեկություն ստանալով Ղարաբաղում հայերի դեմ մարտական գործողություններին Ադրբեջանի տարածքում տեղադրված, բայց Ռուսաստանի իրավասության տակ գտնվող 4-րդ բանակի առանձին ստորաբաժանումների մասնակցության մասին: Բանակի հրամանատարությունը ժխտում է նման մասնակցությունը, Ռուսաստանի ղեկավարությունը մտահոգություն է հայտնում, զգուշորեն անդարկելով կոնֆլիկտի ինտերնացիոնալացման հնարավորությունը:

Իրականում կոնֆլիկտն արդեն վաղուց է ինտերնացիոնալացվել. երկու կողմերն էլ ակտիվորեն ռազմական գիտակ-վարձկաններ են օգտագործում Ռուսաստանից, Մերձբալթիկայից, Ուկրաինայից և ԱՊՀ-ի այլ երկրներից: Բայց դա առանձին խոսակցության թեմա է:

Անկասկած, Ղարաբաղը կարևոր հիմնահարց է Հայաստանի և Ադրբեջանի համար, և նրանց միջև ծագած կոնֆլիկտում ավելի պակաս արյուն չի հեղվել, քան Հարավսլավիայում: Բայց այ դժբախտությունն. Ղարաբաղը «եվրոպական» Եվրոպայից գտնվում է հազարավոր կիլոմետր հեռու, ուստիև նրան անհամեմատ քիչ ուշադրություն է նվիրվում:

Մի ժամանակ աշխարհին ավելի շատ էր հուզում Հայաստանում 1988 թ. տեղի ունեցած երկրաշարժը: Բայց այսօր աղետի գոտին իսպառ մոռացվել է գրեթե բոլորի կողմից: Ներկայումս Սպիտակում կառուցված է ընդամենը 10 հազ. քառակուսի մետր բնակարան, իսկ պետք է կառուցեմ 800 հազար: Տներ ունի քաղաքի բնակչության ընդամենը 13 տոկոսը, 80 հազ. խորանարդ մետր ավերակույտեր այդպես էլ մնացել են չջոկջկված: Սպիտակում փոքրիշատե նորմալ են գործում միայն կարի միավորումը և հացի կոմբինատը, մնացածները ավերակներ են:

Մարդիկ ուտելու բան չունեն, նաև՝ ապրուստի միջոց: Բայց նրանք ապրում են ու մտածում նույն բանի մասին, ինչի մասին մյուս հայերը՝ Ղարաբաղի մասին, Ռուսաստանում տիրող տրամադրությունների մասին, երեխաների մասին, հացի ու մսի գների մասին:

Նախկին Միությունում Հայաստանը առաջինը սկսեց հողի սեփականաշնորհումը: Հնարավոր սովի ուրվականը մարդկանց մտրակով քշել է դաշտ: Եվ ահա արդյունքը. անընդմեջ երկրորդ տարին է բանջարեղենի առյուծի բաժինը վաճառանեղանքներին մատակարարում են ագարակատերերը: Քաղաքներում բանջարեղենի հետ կապված հիմնախնդիրներ չկան, և կոոպերատի խանութներում, որտեղ ագարակատերերը վաճառում են իրենց արտադրանքը, գները համարյա հավասարվել են պետական գներին, իսկ որակի մասին ավելորդ է խոսելը:

Գլխավոր դժբախտությունը փողի բացակայությունն է և՛ ագարակատերերի, և՛ կառավարության մոտ: Իսկ նրանք, ովքեր փող ունեն, չեն շտապում այն ներդնել գյուղատնտեսության մեջ: Որոշ գնահատականներով Հայաստանում այժմ գործում են 40-ից ավելի ֆինանսական խմբեր, որոնցից յուրաքանչյուրը ունի 60-ից մինչև 600 մլն ռուբլի: Հաստատում են, որ նրանց մի մասը կապիտալ է վաստակել երկրաշարժից, վերավաճառելով անվճար մարդասիրական օգնությունը, բայց փողերի մեծ մասը վաստակվել է «վաճառասեղանային» գործունեությամբ, հանրապետություն սընընդամթերք, լայն պահանջարկի ապրանքներ ու բենզին ներմուծելով (հաճախ մաքսանենգությամբ): Ֆինանսական գործադարձուները գերադասում են փողերը ներդնել անշարժ գույքի մեջ, բայց ավելի հաճախ՝ Հայաստանի սահմաններից դուրս: Այդպես ավելի հուսալի է:

Այժմ արդեն հազվադեպ գիշերներ են Երևանում լուսանում առանց կրակոցների. ուրիշի սեփականության «սեփականաշնորհման» տարերային գործընթաց է գընում:

Եկող տարվա առաջին եռամսյակում նախատեսված է մտցնել սեփական արժույթ: Մի շարք օտարերկրյա բանկեր պատրաստակամություն են հայտնել աջակցելու հայկական դրամական միավորին, բայց Հայաստանի բնակչության մեծամասնության համար ռուբլին առայժմ ավելի ընտելական է: «Ի՞նչ պիտի անեմ ես այդ թղթերը, երբ ուզենամ գնալ Ռուսաստան, դստերս մոտ: Ո՞ւմ են դրանք այնտեղ պետք»,— ասում է տարեց մի հայուհի: Չնայած բոլոր վիրավորանքներին ու հիասթափություններին, Հայաստանը առաջվա պես հազար թելերով կապված է Ռուսաստանի և նախկին Միության մյուս հանրապետությունների, նույնիսկ Ադրբեջանի հետ, և այդ թելերը այնքան էլ հեշտ չէ կտրել:

Վ. ՍԱՎԻՉԵՎ

«Արգումենտի ի ֆակտի» № 22, 1992 թ.